Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թ.
հոկտեմբերի 22-ի նիստի N 47
արձանագրային որոշման

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ («ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ) ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ | Միջոցառումը | Նկարագրություն (ակնկալվող արդյունք) | Ժամկետ |
|---|---|---|---|
| 1. | «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի կառուցվածքային և գործառութային մոդելի նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված՝ էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջներըի հաշվառմամբ կնկարագրվի «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգը, դրա հիմնական բաղադրիչները (ներառյալ՝ համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովող ենթահամակարգերը), տեղեկատվության համալրման աղբյուրները, տվյալները տեղեկատվական համակարգ մուտքագրելու (պահպանելու, արդիականացնելու) սկզբունքները, մեթոդաբանությունը: | 2015-2016թթ. |
| 2. | Սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովող համապատասխան ենթահամակարգերում առկա և սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովող՝ համապատասխան ենթահամակարգեր ներառելու | Տվյալների ցանկ՝ ըստ սոցիալական ծառայությունների, ներառյալ՝ դրանց ստացման աղբյուրները և ստացման եղանակը (մուտքագրվում է ձեռքով, այլ տեղեկատվական բազաներից ստացվում է ինքնաշխատ եղանակով, գեներացվում է տեղեկատվական շտեմարանում): | 2015-2016 թթ. |

| | | | |
|---|---|---|---|
| | համար անհրաժեշտ լրացուցիչ տվյալների (տեղեկատվության) գույքագրում | | |
| 3. | «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի միջոցով ծառայությունների մատուցման բիզնես-գործընթացների նկարագրություն | Կնկարագրվեն սոցիալական ծառայություններ մատուցելու ընթացակարգերը, ներառյալ՝ տվյալները «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգ մուտքագրելու սկզբունքները, մեթոդաբանությունը, մուտքագրված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու պայմանները, յուրաքանչյուր տվյալի կիրառական նշանակությունը և այլն: | 2015-2016թթ. |
| 4. | «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի տեխնոլոգիական հենքի և ծրագրային ապահովության ընտրություն | 1. Կհստակեցվի «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի տեխնոլոգիական հենքը և ծրագրային ապահովության լեզուն՝ հաշվի առնելով.<br>1) անհրաժեշտ ծախսերը (լիցենզիա և այլն),<br>2) համակարգի շահագործման և սպասարկման ծախսերը 5-25 տարվա կտրվածքով,<br>3) համակարգի զարգացման միտումները (տեսլականը) և անհրաժեշտ ռեսուրսները,<br>4) համակարգի խոցելիությունը,<br>5) այլ չափորոշիչներ: | 2016-2017թթ. |
| 5. | «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում | Տեխնիկական առաջադրանք, որը կներառի համակարգի ճարտարապետությունը, տվյալների աղյուսակների նկարագրությունը, անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի ցանկն ու նվազագույն պարամետրերը, ծրագրային միջոցների ցանկը, ինչպես նաև կհամապատասխանի **Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի N 47 արձանագրային որոշման** հավելված | 2016-2017թթ. |

| | | | |
|---|---|---|---|
| | | N 2-ին: Միաժամանակ, Տեխնիկական առաջադրանքի շրջանակներում անդրադարձ կկատարվի նաև սոցիալական պաշտպանության ոլորտի գործող տեղեկատվական համակարգերում առկա տեղեկատվությունը «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգ ներառելու կապակցությամբ առկա խնդիրներին՝ նպատակ ունենալով ապահովել մատուցվող ծառայությունների շարունակականությունը: Տեխնիկական առաջադրանքը մշակելիս հաշվի կառնվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված՝ էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները: | |
| 6. | «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի նախագծում, փորձարկում և ներդրում | Հիմք ընդունելով տեխնիկական առաջադրանքը՝ կմշակվի և կփորձարկվի համապատասխան ծրագրային ապահովությունը: | 2017-2018թթ. |
| 7. | Համակարգը օգտագործող անձնակազմի ուսուցում | Նախնական հաշվարկներով՝ անհրաժեշտ է ուսուցում կազմակերպել շուրջ 1500 անձի համար: | 2018թ. |
| 8. | «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի հիմնական շահագործում | Կգործարկվի «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգը: | 2019թ. |

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թ.
հոկտեմբերի 22-ի նիստի N 47
արձանագրային որոշման

**ՑԱՆԿ**

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՆԵՐԱՌՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ**

**1. Ներածություն**

1.1. Առկա իրավիճակ

1.2. Նպատակ

1.3. Պատվիրատուի եզրակացություն

1.4. Բնագավառ /Մասնակիցներ

1.5. Հղումներ

1.5.1. Բաղադրիչ փաստաթղթեր

1.5.2. Հարակից փաստաթղթեր

1.5.3. Տերմիններ

1.5.4. Հապավումներ

**2. Նախագծի նկարագրություն**

2.1. Նախագծի մասնակիցներ/ շահառուներ

2.2. Նախագծի մասնակիցների պատասխանատվության մատրիցա

2.3. Նախագծի իրականացման հիմնական փուլերը

2.4. Նախագծի ժամանակացույց

2.5. Գանտի աղյուսակ

2.6. Կրիտիկական ճանապարհի սահմանում

2.7. Կրիտիկական ժամանակացույցի սահմանում

2.8. Նախագծի խմբի նկարագրություն

2.9. Նախագծային խմբի անդամների պահանջվող նվազագույն գիտելիքները

2.10. Զարգացման թիմի վերապատրաստում

2.11. Նախագծի հաղորդակցման մատրից

**3. Ռիսկի գործոնների գնահատում**

3.1. Ռիսկերի բացահայտում

3.2. Ռիսկերի վերլուծություն

3.3. Ռիսկերի կառավարում

**4. Նախագծի մոնիթորինգ**

4.1. Նախագծի վերահսկման մեխանիզմների նկարագրություն

4.2. Ժամանակային-ֆինանսական վերահսկում

4.3. Գործառութային-ժամանակային վերահսկում

**5. Տեղեկատվական համակարգի համառոտ նկարագրություն**

5.1. Ենթահամակարգեր

**6. Գործառութային նախագիծ**

6.1. Գործառութային ընդհանուր նկարագրություն

6.2. Գործառութային պահանջներ (ներառյալ՝ հսկողական գործառույթները)

6.3. Գործառութային մանրամասն նկարագրություն

6.4. Ինտերֆեյսային մանրամասն նկարագրություն

**7. Տեխնիկական նախագիծ**

7.1. Տեղեկատվական հոսքերի կառուցվածքային նկարագրություն

7.2. Տեղեկատվության նկարագրություն

7.2.1. Մուտքային տեղեկատվության նկարագրություն

7.2.2. Ելքային տեղեկատվության նկարագրություն

7.2.3. Տեղեկատվական շտեմարանի ամբողջական նկարագրություն

7.3. Իրականացման մեթոդաբանության, Իրականացման լեզուների, Իրականացման տեղեկատվական շտեմարանի և Օպերացիոն համակարգի ընտրության սահմանում

7.4. Տեխնիկական միջոցների կառուցվածքային նկարագրություն

7.5. Տեխնիկական միջոցների նվազագույն պահանջների նկարագրություն

**8. Նախագծի ամփոփում**

**9. Ծառայության կիրարկում**

9.1. Ներդրման պահանջներ

9.2. Վերապատրաստման պահանջներ

**10. Թեստավորում**

**11. Սպասարկում և աջակցում**

**12. Շահագործման ուղեկցում**

12.1. Առօրյա առաջադրանքներ

**13. Հավելվածներ**